ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Անուն Ազգանուն, զբաղեցրած պաշտոնը՝

Արմեն Մանուկյան, ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի սոցիալական ծրագրերի բյուջետային գործընթացի կառավարման վարչության ուժային մարմինների բյուջետային ծրագրավորման բաժնի պետ:

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Քաղաք Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն) 2023 թվականի սեպտեմբերի 12-ից 13-ը ներառյալ:

3,Հրավիրող կողմը՝

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության քարտուղարություն:

4. Գործուղման նպատակը (Աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

ՀԱՊԿ ֆինանսատնտեսական գործունեությունը կանոնակարգող որոշ փաստաթղթերի քննարկման նպատակով ՀԱՊԿ քարտուղարությունում անցկացվող ՀԱՊԿ անդամ-պետությունների շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների փորձագետների խորհրդատվություններին մասնակցություն:

5. Քննարկման թեմաները՝

«Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության 2024 թվականի բյուջեի մասին» և «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության 2022 թվականի բյուջեի կատարման հաշվետվության մասին» ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի որոշումների նախագծեր:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ՀԱՊԿ գլխավոր քարտուղարությունում ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի տեղակալ Վ.Սեմերիկովի նախագահությամբ անցկացված խորհրդատվությունների ժամանակ տեղի են ունեցել Բելառուսի, Ղազախստանի, Տաջիկստանի հանրապետությունների և Ռուսաստանի Դաշնության (խորհրդատվություններին Ղազախստանի Հանրապետության ներկայացուցչի մասնակցությունն ապահովվել է տեսակապի միջոցով), ինչպես նաև ՀԱՊԿ քարտուղարության և ՀԱՊԿ միացյալ շտաբի փորձագետների հետ հանդիպումներ, որոնց

ընթացքում քննարկվել են ՀԱՊԿ գործունեությունը կանոնակարգող վերը նշված փաստաթղթերի նախագծերը, ինչպես նաև վերջինների վերաբերյալ ՀԱՊԿ անդամ-պետություններից ստացված առաջարկությունները և դիտողությունները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Փորձագետների խորհրդակցությունների արդյունքների մասին կազմվել է ՀԱՊԿ ֆինանսատնտեսական գործունեությունը կանոնակարգող հարցերով ս.թ. սեպտեմբերի 12-13-ը Ռուսաստանի Դաշնության ք.Մոսկվայում ՀԱՊԿ անդամ-պետությունների շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների իրավասու ներկայացուցիչների խորհրդատվությունների համապատասխան արձանագրություն (կցվում է):

Խորհրդատվությունների արդյունքում փորձագետները հնարավոր համարեցին ՀԱՊԿ 2024 թվականի բյուջեի նախագծով նախատեսվող ծախսերի ծավալի կրճատումը շուրջ 13.06 մլն ՌԴ ռուբլով:

Ծավալված քննարկումների արդյունքում, համաձայնություն ձեռք բերվեց 2024 թվականին ՀԱՊԿ անդամ-պետությունների մասնաբաժինները ճշգրտել 44.77 մլն ՌԴ ռուբլու չափով՝ 2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ ձևավորված ֆինանսական միջոցների տնտեսումների հաշվին:

Միաժամանակ, ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության Քարտուղարության թվաքանակի և հաստիքների մասին» որոշման նախագծով կազմակերպա-հաստիքային միջոցառումների իրականացման նպատակով նախատեսվում է ՀԱՊԿ 2024 թվականի բյուջեում ռեզերվացնել 22.56 մլն ՌԴ ռուբլու չափով ֆինանսական միջոցներ:

Արդյունքում ՀԱՊԿ 2024 թվականի բյուջեի նախագիծը կազմում է 500.68 մլն ՌԴ ռուբլի:

Հայկական պատվիրակությունը ներկայացված բյուջեի նախագծի վերաբերյալ հայտնել է, որ չի աջակցում կազմակերպա-հաստիքային միջոցառումների իրականացման նպատակով ՀԱՊԿ 2024 թվականի բյուջեում 22.56 մլն ՌԴ ռուբլու չափով ֆինանսական միջոցների ռեզերվացումը, քանի որ ՀԱՊԿ մշտական խորհրդում նշված հարցի վերաբերյալ կոնսենսուսի բացակայությամբ պայմանավորված՝ վերը նշված որոշման նախագիծը չի ներկայացվել ՀԱՊԿ անդամ պետությունների ներպետական համաձայնեցման:

Հայկական կողմի տվյալ դիրքորոշումը ներառվել է համապատասխան արձանագրության մեջ:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հանդիպման ընթացքում կատարված առաջարկությունները և դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները ներառված են արձանագրության մեջ:

9. Գործուղվողը՝ Արմեն Մանուկյան:

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝ 18.09.2023թ.